ԵԴ2/8862/02/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25.06.2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Շիլաջյանը (այսուհետ՝ Դատարան), քննարկելով «ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊ ընկերության տնօրեն Էդուարդ Դավթյանի կողմից ներկայացված հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույց պահանջելու հարցերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

«ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊ ընկերության տնօրեն Էդուարդ Դավթյանը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարության՝ «ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ, Երևանի քաղաքապետի պաշտոնակատար Լևոն Հովհաննիսյանի 18.05.2023 թվականի թիվ 1176-Ա որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը դատարանի գրասենյակ է մուտքագրվել 20.06.2023թ., իսկ դատավոր Ա. Շիլաջյանի աշխատակազմին է հանձնվել 22.06.2023թ.:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ «ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊ ընկերության տնօրեն Էդուրդ Դավթյանի կողմից ներկայացված հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածների և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում

է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Հաշվի առնելով վերոգրյալը, Դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետարանից պետք է պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի համաձայն՝

1.Դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով« բացառությամբ այն դեպքերի« երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման« որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

2. Գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:

3. Գործը դատական նիստում քննելու մասին դատարանը կայացնում է որոշում հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ եռօրյա ժամկետում:

4. Գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

"«ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊ ընկերության տնօրեն Էդուրադ Դավթյանը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասով խնդրել է դատարանին սույն գործը քննել դատական նիստում:

Անդրադառնալով սույն գործը դատական նիստում քննելու մասին միջնորդությանը, Դատարանն արձանագրում է, որ վերջինս չի ներկայացրել որևէ պատճառաբանություն և փաստարկ, որը հիմք կտար նման եզրահանգման գալու համար, ինչ վերաբերում է Դատարանի նախաձեռնությանը, ապա ուսումնասիրելով հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերը, գործը դատական նիստում քննելու անհրաժեշտություն Դատարանը դեռևս չի տեսնում, իսկ եթե այդպիսիք ի հայտ կգան պատասխանողի կողմից հայցադիմումի պատասխան և ապացույցներ ներկայացնելուց հետո, ապա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կկայացնի համապատասխան որոշում:Դատարանը հարկ է համարում պարզաբանել, որ սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում պատասխանող ՀՀ քաղաքաշինության կոմիտեն կարող է ներկայացնել տվյալ գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով, ինչպես նաև հայցադիմումի պատասխանը ներկայացվում է

հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով և 27.2 գլխով նախատեսված հոդվածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ԿԱՊԻՏԱԼ ԴԻԶԱՅՆ» ՍՊ ընկերության տնօրեն Էդուրադ Դավթյանի կողմից ներկայացված հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Երևանի քաղաքապետարանից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ սույն որոշման 2-րդ կետի պահանջները պատասխանողի կողմից ենթակա է կատարման սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. ՀՀ քաղաքաշինության կոմիտեն իրավունք ունի հայցադիմումի պատասխան ներկայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ՇԻԼԱՋՅԱՆ**